ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մակդիրը և դրա ուսուցման յուրահատկությունները

Կատարող՝ Լիանա Զոբյան

Գյումրու տնտեսագիտական վարժարան

դպրոց

Ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտԱ. Հայրապետյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ - 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…………………………………………………………………….3

**ԳԼՈՒԽ 1.** Մակդիրի ուսուցումը գործնական մեթոդներով ……………………..………4

**ԳԼՈՒԽ 2.**Մակդիրի ուսուցումը գրականության ժամերին………………………… 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……………………………………………………………14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……………………………………………..15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մակդիրը բառ կամ բառակապակցություն է, որ արտահայտչորեն և փոխաբերորեն բնորոշում է առարկան և երևույթը: Պետք է կարողանալ տարբերել իրարից սովորական որոշիչը և մակդիրը. առաջինը ցույց է տալիս առարկայի ուղղակի հատկանիշը, երկրորդը փոխաբերորեն և հուզականորեն է բնութագրում առարկան, հանդես է գալիս այլաբերական գործածությամբ: օրինակ մանր ավազ- թավշե ավազ, կամ հորդ անձրև- արծաթ անձրև: Կարևոր է հիշել նաև մակդիրի մյուս տարբերակիչ հատկանիշը որոշչից: Դա այն է, որ մակդիրը կարող է արտահայտչականորեն բնութագրել նաև գործողությունը , այսինքն դառնալ գործողության մակդիր , ինչպես հոոսում է ջուրը երակ առ երակ:

Հայտնիէ,որլեզվականյուրաքանչյուրթեմայիուսումնասիրություննախ՝ենթադրում էտվյալուղղությամբգիտելիքիխորացում,հարստացում: Այդպեսէնաևմակդիրիուսումնասիրությունը, որիվերաբերյալաշակերտներըպետքէտեսկանգիտելիքներձեռքբերեննհայոցելզվիժամանակ,իսկգործնականհմտություններընտվյալլեզվամիջոցիարժևորումը՝գրականությանժամի:

Մերաշխատանքըհամարումենքարդիական,քանիորըստդպրոցականծրագրի՝նախատեսվածէլեզվականպատկերավորմանմիջոցների՝այդթվումմակդիրիուսուցումը: Որպեսզիհնարավորինսարդյունավետլինիվերջինիսուսուցումը, անհրաժեշտենոլորնելևգտնելուսուցմանարդունավետմեթոդներ: Հենցայսնպատակինէծառայումմերսույնհետազոտությունը:

Կարծումենք՝հնարավորինսարդյունավետկլինիմերաշխատանքըեթենախուսումնասիրենքմակդիրի՝որպեսլեզվականնյութիուսուցմանառանձնահատկությունը, ապա՝գրականությանժամերին՝արդենքնագրիօգնությամբ: Ըստայսմ՝մերհետազոտությանառաջադիրնպատակիցբխողխնդիրներնեն.

ա/ Մակդիրիուսուցումըգործնականմեթոդներովհայոցլեզվիժամերին:

բ/ Մակդիրիուսուցումըգրականությանժամերինբնագրերիվերլուծությանօգնությամբ:

# ԳԼՈՒԽ 1. Մակդիրի ուսուցումը գործնական մեթոդներով

Մակդիրիմասինտեսականգիտելիքներաշակերտներըստանումեն 6-րդդասարանից[1]:

Նկատենք, որմակդիրիուսումնասիրությունըգործնականումշատավելիլայնկիրառությունէենթադրում, քանիորայնանմիջականորենկապվածէբառապաշարիհարստացմանկարևորհարցիհետ:

Այսամենովմակդիրի՝որպեսլեզվականարտահայտչամիջոցներիցամենատարածվածի ուսուցումըգործնականնշանակությունունի, նաևգործնականուսուցումէենթադրում, նրաարդյունավետությամբպայմանավորվածէդպրոցիառջևդրվածչափորոշչայինպահանջներիցբառապաշարիհարստացումը, պատկերավորմտածողությանզարգացումը, գրագետ /գրավորևբանավոր/ խոսքիապահովումը:

Նշենք, որարդիտեղեկատվականհասարակությունըմիկողմիցհեշտացնումէուսուցչիաշխատանքը՝տրամադրելովտեսազննականպարագաներիհնարավորություն, մյուսկողմից՝ուսուցիչըշատջանքերպիտիտրամադրիիրխոսքիուսուցողականարժեքը պահպանելուհամար: Այսամենիցելնելով, ինչպեսնաևհաշվիառնելովմակդիրիառանձնահատկությունները՝կարծումենք, որավելիարդյունավետենգործնականմեթոդները:

Հայտնիէ, որըստգիտելիքներիձեռքբերմանաղբյուրների՝մեթոդներըբաժանվումեներեքհիմնականխմբերի՝խոսքային, զննականևգործնական: Տվյալդեպքումմեզհետաքրքրողգործնականմեթոդներըտարատեսակվարժություններ են, գործնականաշխատանքները, որոնքկատարվումենաշակերտ-աշակերտ,

---

[1]Գյուրջինյան Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, 2012, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, էջեր 202:

աշակերտ-ուսուցիչհամագործակցությամբ, այսինքն՝աշակերտներըհանդեսենգալիսիբրևակտիվմասնակիցներ, ևուսուցչիխոսքըմիայնուղղորդող /այլոչթեթելադրող/ նշանակությունունեն: Այսպիսիններըլորիհամագործակցայիննփոխգործունմեթոդները: Քանիորտեղեկատվությունննայսօրչափազանցազատէևառատ, աշակերտըևուսուցիչըպետքէկարողանանճիշտկողմնորոշվել, տեսակավորել, որոշելգիտելիքիտեղնուկարևորությունը:

Որպեսզիաշակերտներըկարողանանքննադատաբար, ստեղծագործաբարևարդյունավետկիրառելնորտեղեկությունը, անհրաժեշտէուսուցչիուղղորդողները: «Նմանարդյունքիհասնելուհամարմտածողությանձևավորումնուզարգացումըպետքէդառնանուսուցչիաշխատանքիմշտականուանբաժանմասը»[1]: Ուսուցիչըպիտիձգտիաշակերտներինդարձնելավելիակտիվ, նրանքպիտիկատարենորոնողականաշխատանք, իհայտբերենաշակերտիներքինհնարավորությունները, զարգացնենստեղծագործականմտածողությունը: Սամտածելու «միեղանակէ, որըպահանջումէկարդալ, ընկալելտրվածնյութը, որիցհետոմտածելդրամասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնելայդնյութիկապըկյանքիհետ, կյանքումդրակիրառմանհնարավորությունները»[2]:

Ընդհանրապեսուսուցումըպետքէկազմակերպելկյանքումկիրառելիվերջնարդյունքիհնարավորությանհաշվառումով: Ինչպեսնշումէմանկավարժը[3], այսհամակարգը, որկոչվումէԽԻԿհամակարգ, միմոդելէ, որըբաղկացածէերեքփուլերից, ուրաշակերտներըպետքէներգրավվենմինչնյութըսովորելը /խթանում/, նյութըսովորելուընթացքում /իմաստավորում/ ևնյութըսովորեցնելուցհետո /կշռադատում/:

Եթեհամեմատենքավանդականմեթոդաբանությանհետ, կնկատենք, որԽԻԿհամակարգըհիշեցնումէավանդականհամադրականդասը,

---

[1] Խաչատրյան Ս.Գ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Գյումրի, 2008, էջ 12:

[2] Նույն տեղում, էջ 11:

[3] Տե՛ս նույն տեղում:

որիաշխատանքներիիբազմազանությունըուսուցողականմեծարժեքունի: Այդպիսինէ, օրինակ, տնայինաշխատանքինպատակաուղղվածստուգումը, որըվարժություններիուվերլուծություններիհետմիասինպաստումէնախորդնյութիյու բացմանը: Սրանքէլհիմքենհանդիսանումնորնյութիբացատրությանհամար: Վերջինսիրականացվումէպարզիցդեպիբարդը, եզակիիցդեպընդհանուրգնալու, եզրահանգումներանելուուղիով, որիցէլբխեցվումենսահմանումները: Այսամենիցհետո, արտածման /դեդուկցիայի/ մեթոդովառաջնորդվելով, կատարվումեննյութիյուրացմանընպաստողվարժություններ, որոնքէլպիտիամրապնդվենհամապատասխանտնայինաշխատանքներով:

Օրինակ՝բացատրելովաշակերտներին, թեինչէմակդիրը, կարելիէպատկերելգծագիր՝առավելտպավորիչդարձնելովհամեմատությունը:




Մեկայլօրինակ՝




Այսամենիցհետոառաջարկումենքաշակերտներինընթերցել «Մակդիր» թեմայիննախորդողԱվ. Իսահակյանի «Եղնիկը» պատմվածքիցնկարագրությունպարունակողհատված՝առանձնացնելովմակդիրները:

Դրանիցհետոմիասինսահմանումենք, որմակդիրը՝գեղարվեստականխոսքումպատկերավորիատկանիշարտահայողբառերը կամկապակցություններըկոչվումեն*մակդիր*:

Այսմոտեցմամբ, այնէ՝ամբողջնյութըտեսանելիևճանաչելիդարձնելունկատառումովկարելիէդիմելզնն

ականմեթոդներից, ասենք, դիտմանմեթոդինենցուցադրելտեսանյութմակդիրիվերաբերյալ /կիցնշումենքհղումը[1]/:

Հետո՝դասիընթացքումարդենվարժություններիօգնությամբպետքէհիմնավորելստ ացածգիտելիքը, օրինակ՝

Բառապաշարիհարստացմաննպատակովևսայստիպիաշխատանքներնարդյունա վետեն: Առաջացածնորբառերըկգրանցվենբառատետրերում, նրանցովկկազմենբառակապակցություններ, նախադասություններ, գրույթներ, որոնքէլկծառայենխոսքիզարգացմանը, օրինակ՝կարելիէդասարանըերկուխմբիբաժանել՝մեկխմբինհանձնարարելտալասենք՝եղնիկբառիհամարսովորական, իսկմյուսխմբին՝գեղարվեստականբնորոշումներ.

փոքրիկղեռափթթ

խարտյալազատատ

երկչոտծովաչքերով




Կարծումենք, այսմեթոդովաշակերտներըկհամեմատեննկզգանսովորականնգեղարվեստականբնու թագրումների, ապանմակդիրըավելիդյուրությամբկտարբերակեն:

Ավելիբարձրդասարաններումկարելիէգործդրել «Համառոտդասախոսությունների»[2]մեթոդով՝հիշեցնելովևլրացնելովերեխաներիմակդ իրիմասինունեցածգիտելիքները:

Ավելիբարձրդասարաններում՝մանավանդավագդպրոցում, երբաշակերտներըպատկերավորմանայլմիջոցներըևսանցելեն, կարելիէհանձնարարելհենյալընույթիգործնականառաջադրանքներ, ինչպես՝

**1. Պատկերավորման միջոցներից ո՞րն է գործածված**:

---

[1]https://www.youtube.com/watch?v=4yS3289cPb8

[2] Ս. Վարդումյան, Ս. Սարգսյան և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին ԱՅՌԵՔՍ, Երևան, 2004, էջ 88:

ա)*Խարտյաշ վարսերը փռել, լույս է տվել խավարին, հույս է տվել սրտերին շողշողուն այս պատանին:*

1. փոխաբերություն
2. մակդիր
3. անձնավորում

բ)*Շուտով նրա ծեր առյուծի արծաթաբաշ գլուխը խոնարհվեց մատյանի վրա:*

1. չափազանցություն
2. մակդիր
3. համեմատություն

2. **Պատկերավորման արտահայտչականմիջոցներիցքանի՞սնենգործածվել.**
3. հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

*ԿախվելէժայռըանդունդիվրաԵվդարերայդպեսկախվածէմնում, Ջրերիմեջենոտքերընրա, Իսկգլխինհոգնածամպերնենքնում:*

4. **Պատկերավորման-արտահայտչականմիջոցներիցքանի՞սնենգործածվել.** անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն:

*Պատուհանըսմատնահարեցուանցավհովնիհերարձակաշունին.Զարաճըճիինչ պեսաղջիկմը, ինչպեսԽաղընկերմը՝ ղըրանետինմոռցըված՝ Պատուհանըսմատնահարեցուանցավ, հովնիհերարձակաշունին:*

5. **Ընդգծվածներիցքանի՞սնենմակդիր.**

***հոգնած*** ծնկներ, ***կապույտ*** երազներ, ***սև*** սիրտ, , , ***թռչող*** քամի ***կարմիր*** ծաղիկ , ***գժված*** քամի:

*5.* **Ընդգծվածներիցքանի՞սնենմակդիր.**

***վհատ*** խոսքեր, ***ոսկի*** արտեր, ***երերուն*** քայլվածք, ***բարձր*** ծիծաղ, ***ց նորք*** աղջիկ, ***մեռնող*** արեգակ, ***նիրհող*** դաշտեր:

Այս ամենը, իհարկե, բազմակողմանի և համակողմանի գիտելիքներ տալու միտում ունի, և կարելի է կազմակերպել՝ ըստ դասարանի մակարդակի և պատրաստակամության:

## ԳԼՈՒԽ 2. Մակդիրի ուսուցումը գրականության ժամերին

**Մակդիրը** քերականության մեջ կոչվում է *որոշիչ*, բայց բոլոր որոշիչները չէ, որ մակդիր են: Մակդիրը գեղարվեստական որոշիչն է, որը, սովորական հատկանիշ արտահայտելուց բացի, ունի լրացուցիչ արտահայտչական, հուզական երանգ, բնութագրող է, գնահատող և անպայման փոխաբերական իմաստ ունենալով՝ արտահայտում է նաև հեղինակային վերաբերմունք: Համեմատենք հետևյալ բառակապակցությունները՝ *փափուկ անկողին – փափուկ ժպիտ, կապույտ մատիտ – կապույտ–ամայություն*: Առաջինները սովորական որոշիչ-որոշյալ կապակցություններ են, իսկ երկրորդներ՝ մակդիրներ, որոհետև դրանցում կա փոխաբերական իմաստ, հուզական տարր, հեղինակային վերաբերմունք:

Գրողներն իրենց ստեղծագործական երևակայությամբ մակդիրների միջոցով առարկաների, երևույթների, մարդկանց մեջ հայտնաբերում են նոր հատկանիշներ և թարմություն ու իմաստային խորություն հաղորդում իրենց խոսքին, օրինակ՝ *համր մայթեր, խոսուն շիկնանք, ջերմ ձյուն, ծոցվոր ծառեր* (Պ. Սևակ), *փուշ աշխարհ, քար սրտեր, ծով կարոտ, զմրուխտ հավքեր* (Ավ. Իսահակյան), *տխուր քամի, գեղեցիկ ցավ* (Վ. Դավթյան) և այլն:

7-րդ դասարանում Մակդիր թեմային անդրադառնալուց հետո չափածո ստեղծագործություններից է Համո Սահյանի Ժայռից մասուր է կաթում »: Կարելի է աշակերտներին հանձնարարել

1. դուրս բերել տվյալ բանաստեղծությունից մակդրային կապացությունները
2. փորձել փոխարինել դրաք այլ մակդիրներով:

Ժայռից մասուր է կաթում,
Կարմիր սարսուռէ կաթում,
Ջրում մշուշ է:
Առուն մասուր է տանում,
Կարմիր սարսուռ է տանում,
Ի՞նչ էլ աշխույժ է:
Առուն բարիէ այնպես,
Հասկանալի է այնպես,
Այնպես անուշ է:
Նա երկնչում է քարից,
Բայց երբ թռչում է քարից,
Ահռելի ուժ է:
Առուն ինչպես կլռի,
Սերս եկել է ջրի,
Ձեռքինը կուժ է:
Առուն մասուր է տանում,
Կարմիր սարսուռ է տանում,
Աշուն է, ուշ է:

Ընթերցելով այս բանաստեղծությունը՝ կարելի է դուրս բերել ***կարմիր սարսուռ*** բառակապակցությունը: Նախ անհրաժեշտ է բացատրել *սարսուռ* բառը՝ բուռն հուզմունքից՝ երկյուղից և այլնից առաջացող մարմնի դող, դողդողանք[1]: Կարելի է բառակազմական փոքրիկ աշխատանք ևս կատարել՝ ներկայացնելով բառի կազմությունը /մանավանդ որ 6-րդ դասարանցիների համար բառակազմական աշխատանքները ևս նորություն են/: Բացատրական և ուղղորդող աշխատանքներից հետո կարելի է առաջարկել աշակերտներին կարմիր բառի փոխարեն մեկ այլ բառ դնել, օրինակ՝ *լուսավոր, կարմրաշող, կարմրավառ, կարմրիկ, հրաշեկ* և այլն:

[1]Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, հ. 2, էջ 1286:

Երեխաներն ազատ են, նույնիսկ կարող են բառեր հորինել, ասենք՝ *մաարային* սարսուռ:

Բառապաշարը հարստացնող հետաքրքիր աշխատանք է բնագրում եղած մակդիրները գործածել համապատասխան գոյականների հետ և, հակառակը՝ գոյականները գործածել համապատասխան մակդիրների հետ: Օրինակ՝ **զվարթ** - դեմք, ժպիտ, մանկություն, տեսք, բնություն, երգ և այլն: **Թովիչ** - բնություն, երգ, երաժշտություն, աչքեր, ձայն, նկար և այլն:

Կարելի է մակդիրների գործածությանն անդրադառնալ, գրականության ցանկացած դասի, օրինակ, վերցնենք Վ. Տերյանի «Իմխաղաղերեկոնէիիմա» բանաստեղծությունը: Մեր պատկերացումներն արտահայտենք դասի պլանով:

## Օրվա դասի պլան

**Ամիս, ամսաթիվ՝** ________

**Առարկա** Գրականություն

**Դասարան** 7-րդ

**Դասի թեման՝** *Համո Սահյանի* «Անունդ տալիս» բանաստեղծությունը: Բանաստեղծական շարքերը

**Դասի տեսակը՝** Համակցված

**Դասավանդման մեթոդները՝** զրույցի և տեսազննական մեթոդներ

**Դասի նպատակները.**

**ա/ ակադեմիական**

- Ներկայացնել և վերլուծել ընդհանուր գծերով բանաստեղծական շարքը: ________
- Ներկայացնել և մեկնաբանել «Անունդ տալիս» բանաստեղծությունը՝ բացատրելով բանաստեղծության ստեղծման շարժառիթները:
- Զարգացնել և հիմնավորել պատկերավոր միջոցների և մանավանդ մակդիրի մասին գիտելիքները:

**բ/ սոցիալական**

- Իմանա «Անունդ տալիս »բանաստեղծությունը:

- Կարողանա ամունրել «Անունդ տալիս »բանաստեղծություն, իմանա, որ այն նաև երգի է վերածվել:
- Շարքում ընդգրկված բանաստեղծությունները, դրանց ստեղծման շարժառիթները:
- Զարգացնել բանավոր խոսքը, պատկերավոր մտածողություն:

**Անհրաժեշտպարագաներ** Դասագիրք, տետր, համակարգիչ

**Դասի ընթացքը:**

1. Կազմակերպչական պահ:

2. Տնային առաջադրանքներից ծագած հարցերի քննարկում, մեկնաբանում:

**Խթանման փուլի նկարագրություն**

3. Աշակերտների հարցում:

4. Համապատասխան հարցադրումներով բևեռել աշակերտների ուշադրությունը ներկայացվող դասի նյութին: Օրինակ՝ ինչ գիտենք Համո Սահյանի մասին, ծանոթ է արդյոք «Անունդ տալիս »բանաստեղծությունը, գիտեն արդյոք, որ այն երգի է վերածվել և տարաբնույթ մշակումների ենթարկվել:

5. Առաջադրանքների կատարում:

Ընթերցել բանաստեղծությունը, առանձնացնել մակդիրները, փորձել մեկնաբանել դրանց գործածությունը, առաջարկել մակդիրների այլ տարբերակներ, օրինակ՝ ալևոր կամուրջ- լուռ կամուրջ, հոգնած կամուրջ և այլն: Ունկնդրել երգի կատարումը: Ժամանակ ունենալու դեպքում կարելի է լսել երգի մի քանի մշակումներ, ընտրել, թե դրանցից որը հավանեցին և հիմնավորել՝ ինչու:

**Իմաստի ընկալման փուլի նկարագրություն**

1. Աշակերտների միջոցով նոր նյութի վերհանում և քննարկում:

2. Առաջադրանքների կատարում: Ընթերցել բանաստեղծությունը, մեկնաբանել անհասկանալի բառերը, փորձել մեկնաբանել և վերլուծել ստեղծագործության իմաստը:

3. Առաջադրված հարցերի քննարկում:

**Կշռադատման, գնահատման փուլի նկարագրություն**

1. Հարցերի և առաջադրանքների միջոցով նյութի ամփոփում և հիմնավորում:

Այս փուլում, օրինակ, կարելի է կիրառել ԳՈւՍ մեթոդը.

| Գիտեմ | Ուզում եմ սովորել | Սովորեցի |
|---|---|---|
| Ինչ գիտեմ Համո Սահյանի մասին | «Անունդ տալիս» բանաստեղծությունը Իմանալ հետաքրքրական տեղեկություններ Համո Սահյանի կյանքից: | Սովորեցի Համո Սահյանի մասին հետաքրքրական տեղեկություն, ընթերցեցի, «Անունդ տալիս» բանաստեղծությունը |

2. Աշակերտների գնահատում:

**Տնայինհանձնարարություն**

Պատասխանել «Հարցեր և առաջադրանքներ» բաժնի հարցերին:

Բանաստեղծությունը սովորել անգիր

# Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք ամփոփել մեր աշխատանքը՝ ներկայացնելով հետևյալ եզրահանգումները.

- Մակդիրը՝ որպես պատկերավորման արտահայտչամիջոց ցանկալի է ուսուցանել նախ գործնական առաջադրանքների միջոցով:
- Առաջարկում ենք տեսական իմացությունը հիմնավորել գործնական առաջադրանքներ կատարելուց հետո:
- Ցանկալի է կատարել հնարավորինս շատ բնագրային աշխատանքներ, այսինքն՝ ինչպես մակդիրները, այնպես էլ լեզվական բոլոր գիտելիքները առանց տեքստային, բնագրային աշխատանքի հիմնավոր լինել չեն կարող:
- Ուսուցման մեթոդներն անհրաժեշտ է հատուկ ընտրությամբ գործադրել ցանկալի արդյունավետությունն ապահովելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, h. 1, 2, էջեր 1642:
2. Ամիրջանյան Յու., Ա. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2005, 446 էջ:
3. Գյուրջինյան Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, 2012, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, էջեր 242:
4. Խաչատրյան Ս.Գ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Գյումրի, 2008, էջ 120:
5. Մելքոնյան Ս. Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, «Լույս» հրատ., Երևան, 1984, էջ 157:
6. Վարդումյան Ս., Ս. Սարգսյան և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին ԱՅՈՒԵՔՍ, Երևան, 2004, էջ 288:
7. Տեր-Գրիգորյան, Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, «Լույս» հրատարակչություն, էջ 563: